# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, *ՇԱՀՈՒՄՅԱՆ 5*
*ՀԵՌ. 6 - 07 - 78*
*ԷԼ.ՓՈՍՏ: taperakan@yandex.ru*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*<<18 >> Դեկտեմբերի 2014 թվականի թիվ 40- Ա*

### ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով.

***համայնքի ավագանին որոշում է***

1. Հաստատել 2014 թվականի դեկտեմբերի 18 -ի ավագանու թիվ 9 հերթական նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1) ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ: (ԶԵԿ. ՄԻՀՐԱՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ )
2) ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ: (ԶԵԿ. ՄԻՀՐԱՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ )
3) ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՑՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ;
4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ , ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ: (ԶԵԿ. ՄԻՀՐԱՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ )
5) ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ: (ԶԵԿ. ՄԻՀՐԱՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ)
6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, <<ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ: (ԶԵԿ. ՄԻՀՐԱՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ )
7),,ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ: (ԶԵԿ. ՄԻՀՐԱՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ)
8) ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ: (ԶԵԿ. ՄԻՀՐԱՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ )
9) ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՈՐԱՏՈՒՆԿ ԲԱԶՄԱՄՅԱ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ: (ԶԵԿ. ՄԻՀՐԱՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ)

***Որոշմանը քվեարկեցին*** *Կողմ՝ 7 հոգի Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0*

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՊՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԻՀՐԱՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, ՇԱՀՈՒՄՅԱՆ 5
ՀԵՌ. 6 - 07 - 78
ԷԼ.ՓՈՍՏ: taperakan@yandex.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*<<18>> Դեկտեմբերի 2014 թվականի № 41- Ն*

### ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության Օրենքի 16 –րդ հոդվածի 3 –րդ կետով

***համայնքի ավագանին որոշում է***

Տափերական համայնքի 2014 թվականի բյուջեում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

*Որոշմանը քվեարկեցին Կողմ՝ 7 հոգի Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0*

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՊՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ՄԻՀՐԱՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ*

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 41-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1/ Պակասեցնել եկամուտներ

ա/ Հողի հարկ գյուղատնտեսական նշանակության՝ 435.8 հազար ՀՀ դրամ, ճշտված պլանը սահմանել 13666.0 հազար դրամ:

բ/ Տեղական տուրքեր՝ շենքների շինարարության թույլտվության համար՝ պակասեցնել 100.0 հազար ՀՀ դրամ, ճշտված պլանը սահմանել՝ 30.0 հազար դրամ:

Արտաքին գովազդներ տեղադրելու համար՝ պակասեցնել 10.0 հազար դրամ, պլան չսահմանել:

Տաքսու ծառայության համար՝ պակասեցնել 5.0 հազար դրամ, պլան չսահմանել:

2/ Ավելացնել եկամուտներ

ա/ Գույքահարկ փոխադրամիջոցներից 550.8 հազար դրամ, ճշտված պլանը սահմանել՝ 6373.6 հազար դրամ:

ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՄՈՒՇԵՂ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, ՇԱՀՈՒՄՅԱՆ 5
ՀԵՌ. 6 - 07 - 78
ԷԼ.ՓՈՍՏ: taperakan@yandex.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*«18» Դեկտեմբերի 2014 թվականի № 42- Ա*

### ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով

***համայնքի ավագանին որոշում է***

Տափերական համայնքի սեփականություն հանդիսացող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը անհատույց օգտագործման հանձնել ,,Հայջրմուղկոյուղի,, ՓԲԸ-ին:

***Որոշմանը քվեարկեցին Կողմ՝ 7 հոգի Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0***

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՊՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ՄԻՀՐԱՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, հասցե ՇԱՀՈՒՄՅԱՆ 5
ՀԵՌ. 6 - 07 - 79, 6 - 07 - 78
ԷԼ.ՓՈՍՏ: taperakan@yandex.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«18» Դեկտեմբերի 2014թ. թիվ 43 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների դրույթներով՝

*Համայնքի ավագանին որոշում է.*

Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Տափերական համայնքի վարչական տարածքում 2015 թվականի համար տեղական տուրքերի, վճարների տեսակներն և դրույքաչափերը համաձայն հավելվածի:

*Որոշմանը քվեարկեցին Կողմ՝ 7 հոգի Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0*

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՊՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՍԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

Հավելված
Արարատի մարզի Տափերական
համայնքի ավագանու
2014 թ. Դեկտեմբերի 18 -ի
թիվ 43–Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության տեղական տուրքը սահմանվում է՝

*հիմնական կառույցների համար՝*

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության կառույցների համար՝ 7500 դրամ.

2) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված կառույցների համար՝

ա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ.

գ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000 դրամ.

դ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50 000 դրամ.

*ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝*

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ կառույցների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով կառույցի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ մինչև 1500 (երեք հազար) դրամ.

2) բացի կառույցի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով կառույցի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը՝ կառույցի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի համար կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ կառույցների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ.

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 100 դրամ՝ 1 քմ համար .

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ.

3)խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000 դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 2500 դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 500 դրամ.

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30.000 դրամ:

7. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

4) դատարակ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ:

11. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարը ընթացիկ տարվա համար սահմանվում է 2000 դրամ:

12. Գյուղապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց վճարը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

13. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ:

14. Համայնքի տարածքում աղբահանություն կազմակերպելու համար տեղական վճար սահմանել

1)կենցաղային աղբի համար յուրաքանչյուր անձի համար ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 150 դրամ,

2)Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար յուրաքանչյուր 1 մ³ աղբի համար 1000 դրամ:

ՏԱՓԵՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ                    ՄՈՒՇԵՂ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, *ՇԱՀՈՒՄՅԱՆ 5*
*ՀԵՌ. 6 - 07 - 78*
*ԷԼ.ՓՈՍՏ: taperakan@yandex.ru*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*<<18>> Դեկտեմբերի 2014 թվականի № 44 -Ն*

## ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ կետերով և „Համայնքային ծառայության մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 26 հոդվածի 1-ին կետով

***համայնքի ավագանին որոշում է***

1. Հաստատել Տափերականի գյուղապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբում համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարի կիրառման կարգը և չափերը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Հաստատել համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների Տափերականի գյուղապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար սահմանվող հավելավճարի կիրառման կարգը և չափերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

[illegible]

*Որոշմանը քվեարկեցին Կողմ՝ 7 հոգի Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0*

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՊՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ՄԻՀՐԱՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ*

Հավելված 1
Արարատի մարզի Տափերական
համայնքի ավագանու
2014 թ. Դեկտեմբերի 18-ի
Թիվ 44-Ն որոշման

# ԿԱՐԳ

## Տափերականի գյուղապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանված հավելավճարի կիրառման և դրա չափը

1. Սույն կարգով սահմանվում է Տափերականի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճանի համար աշխատանքի վարձատրության պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարի կիրառման կարգը և դրա չափը:

2. Հավելավճարը սահմանվում է այն համայնքային ծառայողների համար, ովքեր „Համայնքային ծառայության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ստացել են համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճաններ:

3. Տափերականի գյուղապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի տրամադրման դեպքում համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տոկոսային ավելացում 5%-ի չափով՝ ավելի բարձր յուրաքանչյուր դասային աստիճանի համար, շնորհված նաև այլ համայնքների աշխատակազմերում:

4. Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարվում է աշխատավարձի հետ միասին՝ ընդհանուր գումարով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՄՈՒՇԵՂ ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված 2
Արարատի մարզի Տափերական
համայնքի ավագանու
2014 թ. Դեկտեմբերի 18-ի
Թիվ 44-Ն որոշման

ԿԱՐԳ

**Համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների Տափերականի գյուղապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանված հավելավճարի կիրառման և դրանց չափերը**

1. Սույն կարգով սահմանվում է համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների Տափերականի գյուղապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժի համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարի կիրառման կարգը և չափերը:

2. Աշխատանքային ստաժի համար հավելավճարը տրվում է այն համայնքային ծառայողներին, որոնց աշխատանքային ստաժում ընդգրկվում է այն աշխատանքը կամ ծառայությունը, որի համար անձը կրել է գյուղապետարանի աշխատակազմում շնորհված դասային աստիճաններ:

3. Երկար տարիների աշխատանքային ստաժի համար հավելավճարը համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տոկոսային ավելացում 5-ից 10 տարի աշխատանքային ստաժի դեպքում 5 %-ի չափով, 10-ից ավել տարիներին՝ 10 %-ի չափով:

4. Գյուղապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարվում է աշխատավարձի հետ միասին՝ ընդհանուր գումարով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՄՈՒՇԵՂ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, *ՇԱՀՈՒՄՅԱՆ 5*
*ՀԵՌ 6 - 07 - 78*
*ԷԼ.ՓՈՍՏ. taperakan@yandex.ru*

## ՈՐՈՇՈՒՄ

*<<18>> Դեկտեմբերի 2014 թվականի թիվ 45 Ն*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, <<ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով, ,,Իրավական ակտերի մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով

*համայնքի ավագանին որոշում է*

1. Հաստատել Տափերականի գյուղապետարանի, ,, Տափերականի մանկապարտեզ,, ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Տափերական համանքի ավագանու 2014թ. հունիսի 25 ի թիվ 26 Ն որոշումը:

*Որոշմանը քվեարկեցին Կողմ՝ 7 հոգի Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0*

1. **ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ**
2. **ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ**
3. **ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ**
4. **ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ**
5. **ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ**
6. **ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ**
7. **ՊՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ**

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ՄԻՀՐԱՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ*

ՀԱՎԵԼՎԱԾ
Տափերական գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի Դեկտեմբերի 18 -ի թիվ 45 -Ն որոշման

# ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՆՈՐ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը` 23
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը`

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀՀ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ |
|---|---|---|
| ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 120.0 |
| Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 120.0 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 180.0 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/ | 1 | 160.0 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/ | 1 | 140.0 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-2/ | 1 | 140.0 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/ | 1 | 120.0 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-2/ | 1 | 120.0 |
| ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| Օպերատոր | 1 | 100.0 |
| Վարորդ | 1 | 100.0 |
| Գյուղապետարանի հավաքարար | 1 | 100.0 |
| Գործավար | 1 | 100.0 |
| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ | | |
| Գյուղատնտեսական աշխատանքներ համակարգող | 1 | 120.0 |

## *ԱՂԲԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ*

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀՀ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ |
|---|---|---|
| *ԱՂԲԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ* | | |
| Կոմունալ աշխատանքներ համակարգող | 1 | *120.0* |
| Գանձապահ | 1 | *120.0* |
| Հավաքարար | 1 | *120.0* |
| Փականագործ | 1 | *85.0* |
| **Բանվոր** | 2 | *120.0* |

## *ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՆԵՐ ԵՎ ԱԿՈՒՄԲՆԵՐ*

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀՀ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ |
|---|---|---|
| Գեղմասվար | 1 | *120.0* |
| Պարուսույց | 1 | *100.0* |
| Հավաքարար | 1 | *100.0* |
| Բանվոր | 1 | *100.0* |

<<ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀՈԱԿ -ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 22
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀՀ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 120.0 |
| Հաշվապահ | 1 | 80.0 |
| Տնտեսվար | 1 | 80.0 |
| Բուժքույր | 1 | 80.0 |
| Երաժշտության դաստիարակ | 1 | 80.0 |
| Դաստիարակ | 5 | 110.0 |
| Դաստիարակի օգնական | 4 | 80.0 |
| Խոհարար | 1 | 80.0 |
| Խոհարարի օգնական | 1 | 80.0 |
| Օժանդակ բանվոր | 1 | 80.0 |
| Պահակ | 1 | 80.0 |
| Լվացքարար | 1 | 80.0 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՄՈՒՇԵՂ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, ՇԱՀՈՒՄՅԱՆ 5
ՀԵՌ. 6 - 07 - 78
ԷԼ.ՓՈՍՏ: taperakan@yandex.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*«18» Դեկտեմբերի 2014 թվականի թիվ 46 Ն*

ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 րդ հոդվածի 19 րդ կետով

*համայնքի ավագանին որոշում է*

Սահմանել ,,Տափերականի Մանկապարտեզ,, ՀՈԱԿ հաճախող երեխաների ծնողական գումարի չափը 2015թվականի մեկ ամսվա համար 5000 դրամ:

*Որոշմանը քվեարկեցին Կողմ՝ 7 հոգի Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0*

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՊՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ՄԻՀՐԱՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ 04101055

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, ՇԱՀՈՒՄՅԱՆ 5
ՀԵՌ 6 - 07 - 78
ԷԼ.ՓՈՍՏ. taperakan@yandex.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*<< 18 >> Դեկտեմբերի 2014 թվականի թիվ 47 Ն*

## ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, 54 և 55-րդ հոդվածներով և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության Օրենքի 31-րդ և 32 -րդ հոդվածների պահանջներով

***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Տափերական համայնքի 2015 թ. ի բյուջեն
   ա/ եկամուտների գծով՝ 80.885.0 հազար դրամ:
   բ/ ծախսերի գծով՝ 75.220.0 հազար դրամ:
   գ/ պահուստային ֆոնդ՝ 5665.0 հազար դրամ
2. Հաստատել Տափերական համայնքի 2015 թ. ի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների համաձայն հավելված 1:
3. Հաստատել Տափերական համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման համաձայն հավելված 2:
4. Ծախսերի ֆինանսավորումը կատարել փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:
5. <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3- րդ կետի համաձայն թույլատրել համայնքի ղեկավարին կատարել ծախսային հոդվածների հաստատված ծավալի 15% -ը չգերազանցող վերաբաշխումները:
6. Սոցիալական պաշտպանության բնագավառի ծախսերը կատարել համայնքի ղեկավարի որոշումների համաձայն և կանխիկ

դրամի վճարումը կատարել գյուղապետարանի դրամարկղի միջոցով:

*Որոշմանը քվեարկեցին Կողմ՝ 7 հոգի Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0*

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՊՈՂՈՍՅԱՆ ՍԱՆՈՒԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԻՀՐԱՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ*

Հավելված 1
Արարատի մարզի
Տափերական համայնքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 18 -ի
թիվ -47-Ն որոշման

# ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

հազ. դրամ

| Հ/Հ | *Եկամտատեսակները* | |
|---|---|---|
| | Ընդամենը եկամուտներ, այդ թվում | 80 885,0 |
| 1 | Հարկեր և տուրքեր, այդ թվում | 21595,0 |
| 1\|1 | *Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում* | 6875,0 |
| | Գույքահարկ շենքի և շինությունների, որից | 300,0 |
| | Ֆիզիկական անձանցից | 200,0 |
| | Իրավաբանական անձանցից | 100,0 |
| | Գույքահարկ փոխադրամիջոցներից | 6575,0 |
| 1\|2 | *Հողի հարկ, այդ թվում* | 14050,0 |
| | Ֆիզիկական անձանցից | 13850,0 |
| | Իրավաբանական անձանցից | 200,0 |
| 1\|3 | *Ապրանքների օգտագործման և իրացման թույլտվության համար, այդ թվում* | 670,0 |
| | Տեղական տուրքեր, որից՝ | 670,0 |
| | Շինությունների շինարարության թույլտվության համար, որից | 30,0 |
| | Հիմնական շինությունների համար | 30,0 |
| | Ծխախոտի վաճառքի թույլտվություն | 70,0 |
| | Խմիչքների իրացման համար | 70,0 |
| | Վառելիքի վաճառքի համար | 450,0 |
| | Ժամը 24°° - ից հետո աշխատելու համար | 50,0 |
| 2 | Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝ | 55130,0 |
| 2\|1 | *Ընթացիկ ներքին դրամաշնորհներ / դոտացիա/* | 55130,0 |
| 3 | Այլ եկամուտներ, այդ թվում՝ | 4160,0 |
| 3\|1 | *Գույքի վարձակալությունից մուտքեր, որից՝* | 1160,0 |
| | Հողերի վարձակալություն | 560,0 |
| | Այլ գույքի վարձակալություն | 600,0 |
| 3\|2 | *Վարչական գանձումներ, այդ թվում* | 3000,0 |
| | Տեղական վճարներ | 3000,0 |

ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՄՈՒՇԵՂ ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված 2
Արարատի մարզի
Տափերական համայնքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 18 -ի
թիվ -47 - Ն որոշման

## ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

| | ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԱՊԱՐԱՏ | ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ | ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՆԵՐԻ ԵՎ ԱԿՈՒՄԲՆԵՐ | ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ | ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ | ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՇԱՀՈՒՅԹ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ | ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4111 ԱՇԽԱՏԱՎԱՐՁ | 17700,0 | 20700,0 | | 5100,0 | 8200,0 | | | | | | | | 51700,0 |
| 4212 ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 900,0 | 500,0 | | | | 500,0 | | | | | | | 1900,0 |
| 4213 ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | | | | | 5400,0 | | | | | | | | 5400,0 |
| 4214 ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 400,0 | | | | | | | | | | | | 400,0 |
| 4221 ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄ | 50,0 | | | | | | | | | | | | 50,0 |
| 4232 ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 350,0 | | | | | | | | | | | | 350,0 |
| 4234 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 70,0 | | | | | | 200,0 | | | | | | 270,0 |
| 4239 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | | | 1000,0 | | | | | | | | | | 1000,0 |
| 4252 ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ | 100,0 | | | | | | | | | | | | 100,0 |
| 4261 ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ | 200,0 | | | | | | | | | | | | 200,0 |
| 4264 ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ | 600,0 | | | | 200,0 | | | | | | | | 800,0 |
| 4267 ՍՆՈՒՆԴ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ | 100,0 | 3200,0 | | | | | | | | | | | 3300,0 |

| | ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՐԱՏ | ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ | ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՆԵՐԻ ԵՎ ԱԿՈՒՄԲՆԵՐ | ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ | ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ | ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՇԱՀՈՒՅԹ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ | ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4269 ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ | | | 1200,0 | | | | | | | | 250,0 | | 1450,0 |
| 4637 ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ | | | | | | | | | 400,0 | | | | 400,0 |
| 4726 ՀՈՒՂԱՐԿԱՎ. ԾԱԽՍԵՐ | | | | | | | | | | 1500,0 | | | 1500,0 |
| 4729 ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ | | | | | | | | | | 6000,0 | | | 6000,0 |
| 4819 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | | | | | | | | 400,0 | | | | | 400,0 |
| 4891 ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ | | | | | | | | | | | | 5665,0 | 5665,0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 20470,0 | 24400,0 | 2200,0 | 5100,0 | 13800,0 | 500,0 | 200,0 | 400,0 | 400,0 | 7500,0 | 250,0 | 5665,0 | 80885,0 |

ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՄՈՒՇԵՂ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, ՇԱՀՈՒՄՅԱՆ 5
ՀԵՌ. 6 - 07 - 78
ԷԼ.ՓՈՍՏ: taperakan@yandex.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*<<18>> Դեկտեմբերի 2014 թվականի № 48- Ա*

### ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՈՐԱՏՈՒՆԿ ԲԱԶՄԱՄՅԱ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության << Հողի հարկի մասին >> օրենքի 10-րդ հոդվածի գ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավար Միհրան Մանասերյանի առաջարկը.

***համայնքի ավագանին որոշում է***

1. Ազատել հողի հարկից նոր հիմնված և երիտասարդ խաղողի ու պտղատու այգիների սեփականատերերին մինչև տնկարկների լրիվ պտղաբերությունը՝ ըստ հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015թ. հունվարի 1-ից:

***Որոշմանը քվեարկեցին Կողմ՝ 7 հոգի Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0***

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՊՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ՄԻՀՐԱՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ*

Հավելված
Արարատի մարզի Տափերական
համայնքի ավագնու
2014թ.-ի դեկտեմբերի 18-ի
№ 48-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՈՐ ՀԻՄՆՎԱԾ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԽԱՂՈՂԻ ՈՒ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԸ, ՄԻՆՉԵՎ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ

| Հ/Հ | Ազգանուն, Անուն | Հողամասի չափը /հա/ | տեսակը | արտոնության գումարը | հողի հարկից ազատելու ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|
| 1 | ԲԱՐՖՅԱՆ ԱՐՏՅՈՄ ԽԱՉԻԿԻ | 0,30 | խաղող | 7157 | 2015-2018 թթ. |
| 2 | ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳԵՂԱՄ ԼԵՎՈՆԻ | 0,372 | խաղող | 4503 | 2015-2018 թթ. |
| 3 | ՔԱԼԱՇՅԱՆ ԳԱԳԻԿ ԼՅՈՒԴՎԻԳԻ | 0,381 | խաղող | 11276 | 2015-2018 թթ. |
| 4 | ԱԼՈՅԱՆ ԱՍՅԱ ՊԱՐԳԵՎԻ | 0,587 | խաղող | 12989 | 2015-2018 թթ. |
| 5 | ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ ՎՈԼՈԴՅԱՅԻ | 0,153 | խաղող | 1997 | 2015-2018 թթ. |
| 6 | ԱՐԱՄՅԱՆ ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳԻ | 0,230 | խաղող | 4202 | 2015-2018 թթ. |
| 7 | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ ՎԼԱՍԻ | 0,585 | խաղող | 9968 | 2015-2018 թթ. |
| 8 | ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ ԱՆԴՐԱՆԻԿԻ | 0,331 | խաղող | 5691 | 2015-2018 թթ. |
| 9 | ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ ԲՈՒՐԹԵԼԻ | 0,40 | խաղող | 11838 | 2015-2018 թթ. |
| 10 | ԵՓՐԵՄՅԱՆ ՍՈՒՐԻԿ ՊԱՎԼՈՒՇԻ | 0,178 | խաղող | 5268 | 2015-2018 թթ. |
| 11 | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՆՈՒՄ ՄՈՍԻԿԻ | 0,27 | խաղող | 4933 | 2015-2018 թթ. |
| 12 | ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՍՄԻԿ ՍԵԴՐԱԿԻ | 0,441 | խաղող | 8057 | 2015-2018 թթ. |
| 13 | ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԻԿ ԱՐԱՄԻ | 0,162 | խաղող | 4794 | 2015-2018 թթ. |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԽԱՂՈՂ | | 4,3900 | | 92673 | |
| 1 | ԼԵՎՈՆՅԱՆ ԶԱՎԵՆ ՊԵՐՃԻԿԻ | 0,404 | ծիրանենի | 4890 | 2015 -2020 թթ. |
| 2 | ՍԵԴՐԱԿՅԱՆ ՀՐԱՆՈՒՇ ՍՈՒՐԵՆԻ | 0,192 | ծիրանենի | 2324 | 2015 -2020 թթ. |
| 3 | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԵԼԵՆԱ ՑՈԼԱԿԻ | 0,282 | ծիրանենի | 6954 | 2015 -2020 թթ. |
| 4 | ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱԼԻՆԱ | 1,052 | ծիրանենի | 12734 | 2015 -2020 թթ. |
| 5 | ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ ԲՈՒՐԹԵԼԻ | 0,150 | ծիրանենի | 4439 | 2015 -2020 թթ. |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԾԻՐԱՆԵՆԻ | | 2,080 | | 31341 | |
| 1 | ՍԱՐԳՍՅԱՆ ՔԱՋԻԿ ՄՆԱՑԱԿԱՆԻ | 0,257 | խնձորենի | 4695 | 2015 -2019 թթ. |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԽՆՁՈՐԵՆԻ | | 0,257 | | 4695 | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 6,727 | | 128709 | |

ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՄՈՒՇԵՂ ՂԱԶԱՐՅԱՆ